

նոյն զիւղէն՝ իր հօրաքանդորդին եր նորիջանեան Թովմաս որ գրելու կարողութիւն ունեցող վարդապետ մըն էր և որ շատ ճամբորդութիւններ քրած էր Կիպրոս կղզին և Խալկիոյ մէջ, իր հետ ունենալով Մ. Վանանդեցին իրը սպասուոր։ Ի Հոռոմ բաժնուելով իրարմէ՝ երբ Թ. Նորիջանեան ուրիշ կողմ կ'ուղեւորէր, Մատթէոս 1670 ին կ'երթայ Լիվոնիո ուր կը գտնուէր Ոսկանի տապարանը՝ Ամսդերամէն փոխադրուած։ Ինն Ոսկանի աշակերտ՝ Կարապետ Վ.էն կը սորվի գրաշարութիւն, — ինչպէս ինք կը խոստովանի 1685 ին տպած Շարակնոցին մէջ, — և 14 տարի Ոսկանի տապարանը կը մնայ առանց վարձք ստանալու, պարագայ մը որ Ոսկան Վրդ.ի և անոր յաջորդ Ս. Լեւոնեանի նիւթական անձուկ վիճակը կը շեշտէ, նաեւ Կիւրքեմպերկի արուեստին մասին Մատթէոսի ունեցած անասնման սերը։ Այդ անձնուոր աշխատութեան ընթացքին է որ Յակոբ Գ. Կարողելոս միշտ կը խրախուսէր գինք՝ օրհնութեան զիրերով և սպազայի խոստումներով։ Վանանդեցի Մատթէոսի դրոշմած գործերը հայ տպագրութեան մէջ նշանակելի տեղ մը կը գրաւեն՝ իրենց վաղեջազեղ պատրաստութեամբ։ — **յԱմսպետրամ՝ իր ջանքերով բացած ռպարանը՝ որ ընծայուած էր Ս. Խաչին և Մարիամու Ս. Կուսին՝** կը քայքայուի։ Մատթէոս կը բաժնուի իր 2 ընկերներէն, զորիկ նիւթական միջոցներէ։ Այն ատեն է որ կը դառնայ հայրենիք՝ բերես մեկենաս մը գտնելու և իր յարած գործին կրկին նուիրուելու համար։ Իր ազգական՝ Նորիջանեան Թովմաս Վրդ. նոյն միջոցին Գողթնեաց Ս. Խաչ վանքին եպիսկոպոսն էր։ Մատթէոս կը համոզէ զայն և ձեր տարիքին մէջ եւրոպա ճամբորդել կու տայ անոր, ձեռք առնելու համար Ոսկանէ հիմնուած հիանալի գործը։ Միասին կ'աշխատակցին ցմբեջ և իրենց հրատարակութիւններով մեծապէս օգտակար կը հանդիսանան ազգակիցներու մտատրական զարգացման։

269. Թովմաս Խաչակ. Վանանդեցի (եռամեծ վարդապետ). — Եւրոպա-

ները պտտող այս ծերունագարդ կղերականը որ կատարեալ գրոց-քրոց մըն էր, հակառակ Գողթան զաւառը սաստիկ սիրելուն՝ կ'որոշէ հեռանալ անկէ դէպ ի Հօլանտա, գերման Մեծ Գործաւորին գիւտովը անցունելու համար իր կեանքին վերջին տարիները։ Մեկնումէն առաջ՝ Մատթէոսը կը դրկէ ինն, որպէս զի անհրաժեշտ պատրաստութիւնները տեսնէ։ շատ չանցած ինք եւս միանալով անոր՝ ձեռք կ'առնէ գործատան ղեկավարութիւնը։ Իրենց հետ էին իր 2 եղբորորդիները՝ Ղուկաս և Միքայէլ որոնց մասին գրուած է հրատարակած զիրքերուն Յիշատակարանին մէջ քէ քաջ յատիներէն գիտէին և բազմակողմանի հմտութիւն ունէին զոր ի սպաս դրին տպարանին՝ ձեռագիրներ հայրաքերելու համար։ Ամենքը մեկ սիրտ մեկ հոգի են ինն, ազգականներու համախմբում մըն է որ ձեռք ձեռքի տուած՝ կը նուիրուի Հայուն զարգացման գործին, բարձրացունելով հայ ցեղին անունը յաջա քաղաքակիրք ազգերու։ Գործատան հոգին է Մատթէոս, մինչ երկու եղբայրներէն մանուսանդ Ղուկաս ցմբեջ չէ զլացած իր օգտակար օժանդակութիւնը՝ նեղինակի և շարաբարդողի կրկնակ դերերով։ Այս խմբակին լոյս ընծայած առաջին հրատարակութիւնը եղաւ **Համասարած աշխարհացոյց** անուն քարտէս մը 1695 ին՝ աշխարհի նուր ճաշակով պատրաստուած և այնքան օգտաշատ գործ մը, քանի որ Հայը վաճառական ժողովուրդ մըն էր և պէտք ուներ ճանչնալու աշխարհի մասերը։ Նոյն տարին հրատարակեցին նաեւ Մ. Խորենացիի **Ազգաբանութիւն տոհմին Յարքերեան** տիւղոսով ուշագրաւ պատմագրութիւնը որուն բնագիրը դժուարաւ կրցած էին ձեռք ձգել։ Այս երկու գործերը կը բաւեն՝ անմահացունելու համար անունը Նորիջանեանց ընտանիքին, և դասելու զիրենք ի շարք ազգ. բարերարաց։ Իրենց շնորհին էր որ հայ մեծանուն պատմագիրը ճանչցուեցաւ եւրոպացիներէ, մինչ Հայկեան սերունդն ալ իր տեղը գրաւած եղաւ համաշխարհային պատմութեան մէջ։ — Յաջորդ տարին նոյն տպարանէն լոյս ընծայուած գործերը եղան «Համասարած աշխարհացոյց»ի բացատրութիւնը եղող **Բանալին** և Թովմաս Գեմբացիի **Համահեծուն մի Գրքոստին** (Բ. տիպ)։ 1698 ին՝ **Նոր Կտակարան**, **Չայնազ Եւրական**, և **Համաձայնութիւն հնգեհեստի ամսոց Հռոմայեցոց**։ 1699 ին՝ Ղուկասի և Մատթէոսի յօրինած **Գիւղն իմաստութեան** «կամ Ոսկեայ դուռն դպրատան» (դասագիրք), նաեւ Ղուկասի նեղինակած **Գանձ** «չափոց, կշռոց, բուռց և դրամից բոլոր աշխարհին»։ 1700 ին՝ **Գործք առաքելոց**։ 1702 ին՝ Ղուկասի **Բնաբանութիւնը** (հայերէն առաջին բնապատմութիւնը) և **Շարական** (Գ. տիպ)։ 1704 ին՝ Ղուկասի **Պատգոն Ամ.ալին**ը, **Համբոյր սրբութեանն ու Յոգեհայիմի** «Ամ.արանական, բարոյական և քրք. իրողութեանց սանմանք»։